**Արձանագրություն N 2**

***«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ ինֆեկցիոն մասնաշենքի հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/91» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

«22» «Նոյեմբերի» 2024թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Բաբայան |
| Հանձնաժողովի անդամներ | Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Հ.Խուրշուդյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Սարգսյան |

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Ա. Բաբայան)***

Ընդունել ի գիտություն, որ 05.11.24թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի նոյեմբերի 18-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2024 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 11:00-ին: 2024 թվականի նոյեմբերի 20-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Մեդտեխսերվիս» ՍՊԸ | medtechservice@mail.ru | 02205001 |
| 2 | «Մեդթրեյդ» ՍՊԸ | info@medtrade.am | 00220168 |
| 3 | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | tender@theopharma.am | 00471216 |
| 4 | «ԷՄՀԱՐ» ՍՊԸ | emharllc@gmail.com | 08285951 |
| 5 | «Մեդ Ստանդարտ» ՍՊԸ | Medstandart7@gmail.com | 00114928 |
| 6 | «Յունիմեդ» ՍՊԸ | Unimed7@yandex.ru | 01806887 |
| 7 | Կարապետյան Հովիկ ԱՁ | karapetyanhovik@proton.me | 123456789 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Ա. Բաբայան)***

1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Կարապետյան Հովիկ» ԱՁ-ի կողմից ներկայացված ծրարում բացակայում էր հրավերի պահանջով պարտադիր ներկայացվող հայտի ապահովումը և վերջինիս հայտը ենթակա է մերժման: 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Թեոֆարամա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

## *3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման իրավերի պահանջներին համապատասխանության մասին*

---

*(Ա. Բաբայան)*

«Կարապետյան Հովիկ» ԱՁ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է իրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա չէ մերժման՝ բացակայում է հայտի ապահովումը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում է անբավարար և ենթակա է մերժման: «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է իրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա է շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը 20.11.2024թ. որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 20.11.2024թ. ծանուցել է մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումները՝ ըստ մասնակիցների.

**«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ**

**Հարգելի մասնակից:**

**«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/91» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:**

22.11.2024թ. էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էին ծանուցված մասնակցի կողմից ներկայացված պահանջված շտկումները: Գնահատող հանձնաժողովը գնահատելով մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը արձանագրել է, որ ծանուցված մասնակցի կողմից ներկայացված շտկումները կատարված են ամբողջովին և ներկայացված շտկված տարբերակները համապատասխանում են իրավերի պահանջներին: Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը կայացրել է հետևյալ որոշումը՝

**Որոշվեց.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները մերժել «Կարապետյան Հովիկ» ԱՁ-ի հայտը: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները՝ շտկումներ ներկայացրած «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

## *4. Մասնակիցների առաջարկած գների մասին*

---

*(Ա. Բաբայան)*

19.11.2024թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

### *5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին*

---

***(Ա. Բաբայան)***

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

### *6. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

***(Ա. Բաբայան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/91» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝

- «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով՝ 20,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

Մերժել բոլոր այն մասնակիցների հայտերը ում ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման գները՝ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ և 3-րդ մասերի:

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԱՁԲ-2024/91» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ 1-ին չափաբաժնի մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/91» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 23.11.2024թ.-ից մինչև 02.12.2024թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ -------------------------- Ա. Բաբայան

Անդամներ՝ -------------------------- Վ. Վահանյան

-------------------------- Ա. Գևորգյան

-------------------------- Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ -------------------------- Հ. Սարգսյան

Վանաձորի ԲԿ Ինֆեկցիոն մասնաշենքի հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/91 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 19.11.2024թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

| Հ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «Մեդտեխսերվիս» ՍՊԸ | | | | | «Կարապետյան Հովիկ» ԱՁ հայտի ապահովումը բացակայում է | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Շարժական թվային ռենտգենյան սարքավորում | 33111330/502 | 1 | 28,500,000.00 | 28,500,000.00 | 19,715,000.00 | 0.00 | 19,715,000.00 | 19,715,000.00 | 19,715,000.00 | 17,000,000.00 | 0.00 | 17,000,000.00 | 17,000,000.00 | 17,000,000.00 |
| 2 | Թոքերի արհեստական շնչառության սարք (ԹԱՇ) | 33151250/505 | 4 | 13,400,000.00 | 53,600,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |

Վանաձորի ԲԿ Ինֆեկցիոն մասնաշենքի հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/91 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 19.11.2024թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

| Չ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | | | | | «Մեդթրեյդ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Շարժական թվային ռենտգենյան սարքավորում | 33111330/502 | 1 | 28,500,000.00 | 28,500,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | 24,430,000.00 | 0.00 | 24,430,000.00 | 24,430,000.00 | 24,430,000.00 |
| 2 | Թոքերի արհեստական շնչառության սարք (ԹԱՇ) | 33151250/505 | 4 | 13,400,000.00 | 53,600,000.00 | 20,000,000.00 | 0.00 | 20,000,000.00 | 5,000,000.00 | 5,000,000.00 | 46,960,000.00 | 0.00 | 46,960,000.00 | 11,740,000.00 | 11,740,000.00 |

Վանաձորի ԲԿ Ինֆեկցիոն մասնաշենքի հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/91 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 19.11.2024թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

| Հ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «ԷՄՀԱՐ» ՍՊԸ | | | | | «Մեդստանդարտ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Շարժական թվային ռենտգենյան սարքավորում | 33111330/502 | 1 | 28,500,000.00 | 28,500,000.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 | | | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2 | Թոքերի արհեստական շնչառության սարք (ԹԱՇ) | 33151250/505 | 4 | 13,400,000.00 | 53,600,000.00 | 22,500,000.00 | 0.00 | 22,500,000.00 | 5,625,000.00 | 5,625,000.00 | 29,464,000.00 | 0.00 | 29,464,000.00 | 7,366,000.00 | 7,366,000.00 |

Վանաձորի ԲԿ Ինֆեկցիոն մասնաշենքի հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/91 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները մինչև հակադարձ աճուրդը և 19.11.2024թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

| Հ/Հ | Սարքավորման անվանումը | CPV կոդը | Քանակ | Նախահաշվային | | «Յունիմեդ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | | Միավորի գին/ ՀՀ դրամ | Գնման գին/ ՀՀ դրամ | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Շարժական թվային ռենտգենյան սարքավորում | 33111330/502 | 1 | 28,500,000.00 | 28,500,000.00 | | | 0 | 0 | 0 |
| 2 | Թոքերի արհեստական շնչառության սարք (ԹԱՇ) | 33151250/505 | 4 | 13,400,000.00 | 53,600,000.00 | 53,600,000 | 0 | 53,600,000 | 13,400,000 | 13,400,000 |